<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.1Խ-24

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 04.03.2025թ., ժամը 17:15

Նիստին ներկա էին՝ խորհրդի 9/ինը/ անդամներից 8 /ութը/:
Խորհրդի անդամներ՝ -
Հ. Ռ. Շիրինյան (նախագահ), Գրիգորյան Ս.Է., Գամբուրյան Ս.Կ., Երոյան Տ.Ս., Մաթևոսյան Է.Հ., Հակոբյան Ն.Խ., Եսայան Հ.Լ. և Մինասյան Մ.Հ.:
Խորհրդի անդամ Ղազարյան Գ.Գ. գտնվում է արձակուրդում ՀՀ տարածքից դուրս:
Հրավիրված անձ՝ գլխավոր հաշվապահ – Մակարյան Ազատուի Սերյոժայի

Նիստի օրակարգը՝

- Ընկերության 2024թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտակցված աուդիտորական ընկերության մրցույթի արդյունքների մասին (զեկուցող՝ խորհրդի նախագահ Հրանտ Շիրինյան):
- Այլ հարցեր

Ժողովը բացեց խորհրդի նախագահ Հրանտ Ռուբենի Շիրինյանը և ձայնը տվեց խորհրդի անդամ, Ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Սամվելի Երոյանին:

Նա ասաց, որ Ընկերությունը սույն թվականի փետրվարի 3-ին, <Բաժնետիրական ընկերությունների մասին> օրենքի 96-րդ հոդվածի համաձայն ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով հրապարակել է հետևյալ հայտարարությունը՝

<<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական ընկերության ընտրության համար:

Հայտերն ընդունվում են մինչև 2025 թվականի մարտի 3-ը:

Հայտերը ներկայացնել <Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան> ԲԲԸ: Հասցե՝ ք. Երևան, Արշակունյանց պող., 12: Հեռախոս՝ 010-525321:>

Ստացվել են երկու հայտ՝ Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ից և <ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ> ՍՊԸ-ից:

Խորհրդի անդամ Հ. Եսայանը խորհրդի անդամների մոտ բացեց ծրարները:

Աուդիտորական ընկերությունները աուդիտի շրջանակում նախատեսում են իրականացնել 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների /ISA/ և ՀՀ գործող օրենսդրության ու աուդիտի արդյունքների հիման վրա տրամադրել անկախ աուդիտորական եզրակացություն:

Ընկերությունների ֆինանսական գնային առաջարկները՝

1. Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի – 2,800,000.00 դրամ,
2. <ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ> ՍՊԸ-ի – 2,850,000.00 դրամ:

Խոսքը տրվեց գլխավոր հաշվապահ Մակարյան Ա. Ս.

Նա ասաց, որ մրցույթին մասնակցող ընկերությունները, ելնելով իրենց կատարողականից և առաջարկվող գնից, կարող են մասնագիտական օբյեկտիվ աուդիտ իրականացնել: Սակայն <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ն տվյալ ոլորտում ունի 15 տարվա աշխատանքային փորձ: Գլխավոր հաշվապան առաջարկեց խորհրդի անդամներին քվեարկել՝ ելնելով ոլորտում մասնագիտական փորձից և մինիմալ ֆինանսական գնային առաջարկից:

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ Մաթևոսյան Է.Հ., Եսայան Հ.Լ և Մինասյան Մ.Հ. նրանք իրենց ելույթներում համաձայնվեցին գլխավոր հաշվապահի փաստարկներին և առաջարկեցին կողմ քվեարկել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի համար:

Բաց քվեարկությանը դրվեց < ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ> ՍՊԸ-ի և <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի Ընկերության 2024 թվականի ֆինանսատնտեսական գործնեության աուդիտ իրականացման հարցը՝

<ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ> ՍՊԸ-ի – 0- /կողմ/, 7- դեմ, 1-ձեռնպահ

<Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի – 7-/կողմ/, 0 - դեմ, 1- ձեռնպահ;

Բաց քվեարկությամբ Ընկերության 2024 թվականի ֆինանսատնտեսական գործնեության աուդիտը իրականացումը պատվիրվում է <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. *Ընկերության 2024 թվականի ֆինանսատնտեսական գործնեության աուդիտ իրականացնող անձ ընտրել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ -ին:*
2. *Գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ Տ. Ս. Երոյանին կնքել պայմանագիր <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ –ի հետ, ընդհանուր գումարով 2,800,000.00 ՀՀ դրամ:*

Խորհրդի նախագահ	Հ. Ռ. Շիրինյան
Խորհրդի անդամ	Տ. Ս. Երոյան
Խորհրդի անդամ	Ս. Է. Գրիգորյան
Խորհրդի անդամ	Հ. Լ. Եսայան
Խորհրդի անդամ	Ս. Կ. Գամբուրյան
Խորհրդի անդամ	Է. Հ. Մաթևոսյան
Խորհրդի անդամ	Ն. Խ. Հակոբյան
Խորհրդի անդամ	Մ. Հ. Մինասյան